




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» հոկտեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-38/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի 14.10.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 14.10.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով 06.10.2015թ. հայտ է ներկայացրել:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն հայտի N 4 հավելվածը՝ գնային առաջարկը, ներկայացրել է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ինքնարժեքի գինը կազմել է 167.867.158 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի հավելված N 3.4-ով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.10.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.10.2015թ. ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով, նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ, խնդրել է Կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 109.031.746 ՀՀ դրամ:

Ընկերությունը ներկայացրած բողոքով վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

- 1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում երկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

դ. օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

Ընկերությունը վկայակոչել է նաև Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը, որի համաձայն՝ մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.10.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 109.031.746 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է նաև, որ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ դրույթ, քանի որ Ընկերությունը դատական կարգով սնանկ չի ճանաչվել, չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար և ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքաբերը պնդել է, որ Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դրույթը, քանի որ եթե Ընկերության կողմից ներկայացված ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը, որի «ա» կետի համաձայն՝ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից՝ չի կարող հանդիսանալ գնման գործընթացի շրջանակում ներկայացված կեղծ տվյալ, քանի որ այդ փաստաթուղթը հանդիսանում է «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված և կնքված փաստաթուղթ, այլ ոչ պետական և (կամ) պաշտոնական փաստաթուղթ և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը կարող էր նաև չիմանալ իր վերջին երեք տարիների համախառն եկամուտի գումարի թիվը, իսկ տվյալ դեպքում Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը կեղծ տվյալ չի կարող դիտարկվել, որպիսի հիմքով Ընկերությունը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը գտնում է, որ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ից չպետք է գանձել 06.10.2015թ. ներկայացված հավելված N 9-ով ներկայացված տուժանքի մասին

համաձայնությամբ նախատեսված և կից ներկայացված վճարման պահանջագրով նախատեսված 4.200.000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը, քանի որ այդ գումարը ենթակա է գանձման միայն այն դեպքում, երբ Ընկերության կողմից ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չի կատարվել կամ կատարվել է ոչ պատշաճ:

Ընկերությունը վերոհիշյալի արդյունքում գտնում է, որ թե՛ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և թե՛ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խախտվել և կարող են խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 5-րդ և 6-րդ հոդվածները:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն (այսուհետ՝ Խորհուրդ) իրավունք ունի որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ, Ընկերությունը խնդրել է Խորհրդին որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել՝ մինչև Խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը և դադարեցնել «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշումը:

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 19.10.2015թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիքորոշումը

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 19.10.2015թ. թիվ 01/08/[19790]-15 գրությամբ ներկայացրել է «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Հերացի հ. 12 հասցեում լաբորատոր և վարչական շենքերի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 07.10.2015թ., որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 12 կազմակերպություններ:

Պատվիրատուն հայտնել է, որ «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով զբաղեցրել է երկրորդ տեղը: Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում ընկերությունների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջների առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրել է հարցման մասին եզրակացություն: Տրամադրված եզրակացության արդյունքում «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող: «Գեվ-ԷԼ-Պլաստ» ՍՊԸ-ն ծանուցվել է՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափով հայտի ապահովման վճարման պահանջի մասին:

Կենտրոնում 19.10.2015թ. ժամը 15:00-ին կայացած ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Պատվիրատուն հայտնեց, որ «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կայացվել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշում, ուստի Պատվիրատուի ներկայացուցիչը գտնում է, որ «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

3. ԳԲԽ-38/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-38/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ընդհանուր տարածքի և «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաշենքի ուժեղացման, արդիականացման, բարեկարգման և վերակառուցման աշխատանքների նպատակով հայտարարված «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով 07.10.2015թ. հայտ է ներկայացրել:

3. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով հավելված N 3.4-ով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու

տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

4. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն հայտի N 4 հավելված՝ գնային առաջարկը ներկայացել է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է **205.469.401 ՀՀ դրամ**:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.10.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով որոշել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

6. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.10.2015թ. կատարված հարցմամբ՝ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

7. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է **109.031.746 ՀՀ դրամ**:

8. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ն 14.10.2015թ. ներկայացրած բողոքով խնդրել է ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդին որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել՝ մինչև Խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը և դադարեցնել «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշումը:

9. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի, 19.10.2015թ. կայացրած որոշմամբ մերժել է «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի՝ միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքը, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 19.10.2015թ. թիվ 01/08/[19790]-15 գրությունը և կից փաստաթղթերը, «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի 19.10.2015թ. կայացրած որոշումը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնախոհովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Նույն օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն 14.10.2015թ. բողոքով պահանջել է որպես ժամանակավոր միջոց կասեցնել «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 48-րդ կետի 2-րդ մասով նախատեսված՝ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշումը՝ մինչև Խորհրդի կողմից համապատասխան որոշում կայացնելը, որը ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի 19.10.2015թ. որոշմամբ մերժվել է:

Մինչույն ժամանակ «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ն պահանջել է դադարեցնել «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 48-րդ կետի 2-րդ մասով նախատեսված՝ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշումը:

Մինչդեռ 19.10.2015թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-38/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի ժամանակ Ընկերության և Պատվիրատուի ներկայացուցիչների հայտնած դիրքորոշման և Պատվիրատուի ներկայացուցչի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կայացվել «Գեվ-Էլ-Պլաստ» ՍՊԸ-ին գնման գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին համապատասխան որոշում: Այսինքն, բողոքարկման առարկա հանդիսացող որոշումը գոյություն չունի, ուստի և բացակայում է նաև բողոքարկման հիմքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԲԸԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2015-01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի կայացվել «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու մասին որոշումը, ուստի հիմք ընդունելով «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքի առարկայի բացակայության հանգամանքը՝ առաջարկում ենք «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի 14.10.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Այունց

Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչի ժ/պ



Լ. Հովակիմյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-38/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան